

Արցախի կարգավիճակի եւ արցախահայերի հաւաքական վերադարձի իրաւունքի հարցերը օրակարգի վրայ են. ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւն

Վերջին շաբաթների ընթացքում Նիկոլ Փաշինեանն ու իր վարչակազմը եւս մէկ անգամ ցնցել են Հայաստանն ու հայոց աշխարհը՝ բացայայտելով իրենց հերթական միակողմանի գիւղումների պատրաստակամութիւնը: Այս անգամ հերթը Տաւուշի մարզինն է: ՀՀ ներկայ իշխանութեան վարած ազգազորման քաղաքականութեան հետեւանքով թշնամուն են յանձնուում ուղղակի վարական նշանակութեան տարածքներ, ինչը առաջացնելու է անվտանգային լրջագոյն սպառնալիքներ:

Արցախի յանձնումը միայն սկիզբ էր: ՀՀ իշխանութիւնը ամէն կերպ մոռացութեան է տալիս Արցախն ու Արցախի հարցը: Արցախի իրաւունքների բարձրացման եւ հետապնդման բացառիկ լիազօրութիւն ունեն Արցախի ժողովրդի կողմից ընտրուած պետական մարմինները: Այդ մարմինները վարկաբեկելը եւ նրանց գործունէութեանը խոչընդոտելը նշանակում է հրաժարուել այդ իրաւունքներից:

Արցախի կարգավիճակի եւ արցախահայերի հաւաքական վերադարձի իրաւունքի հարցերը հայտնութեան օրակարգի վրայ են եւ մինչեւ չլուծուեն այդ հարցերը՝ չի կարող լինել արժանապատիւ եւ իրական խաղաղութիւն:

Հ.Յ.Դաշնակցութիւնը անցնող տարիների ընթացքում բազմիցս զգուշացրել է Հայաստանի եւ Արցախի նկատմամբ թշնամիներից եկող վտանգների ու սպառնալիքների մասին, որոնց առջեւ գիտակցաբար եւ համոզումով տեղի է տալիս ՀՀ իշխանութիւնը:

Անհրաժեշտ է վերջ դնել ազգային արժէքների ու կառոյցների դէմ պայքարելու քաղաքականութեանը եւ կեդրոնանալ Հայոց բանակի մարտունակութեան բարձրացման ու հզօրացման վրայ:

Համոզուած ենք՝ Հայաստանում եւ Սփիւռքում, բոլոր առողջ, ազգային ուժերի համախմբումը հրատապ անհրաժեշտութիւն է: Օրակարգը մէկն է՝ հայկական պետականութեան փրկութիւնը:



Հ.Յ.Դ. ԲԻՒՐՕ
28 Մարտ, 2024 թ.

Պրիթիշ Գոլումպիա ճանապարհի վարչապետ Տէյվիտ Էպլի հետ հանդիպման ընթացքին Գանատայի Հայ Դատի յանձնախումբը արձարծեց Արցախի հարցը

Մարտ 16-ին, Վանգուվերի մէջ կայացած SUCCESS բարեսիրական հիմնարկի տարեկան ընդունելութեան ներկայ գտնուեցան Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանի ներկայացուցիչներ Վահէ Անտոնեան, Վանեսա Պարտագեան Յակոբեան, Մեղրիկ Սիւլահեան եւ Սեւան Յակոբեան: Նշենք, որ բարեսիրական նախաձեռնութեան այս տարուան ընդունելութեան համանախագահ է Վանգուվերի Հայ համայնքի գործարար եւ համայնքի հասարակական գործիչ Վահէ Ակոբեանը:

Ընդունելութեան նախօրեակին Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ Վահէ Անտոնեան առիթը ունեցաւ հանդիպելու միջոցաւման պատուոյ հիւր՝ Պրիթիշ Գոլումպիա նահանգի վարչապետ Տէյվիտ Էպլի հետ: Առանձնազրոյցի ընթացքին Անտոնեան վարչապետ Էպլի փոխանցեց Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի անդամ Լիլիթ Գալստեանի ողջոյնները: Յիշեցնենք, որ անցեալ տարուան յունիսին, Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) խորհրդարանական վեհաժողովի Վանգուվերի նստաշրջանի աւարտէն ետք, Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախումբի կազմակերպութեամբ, ԵԱՀԿ նստաշրջանին մասնակից Հայաստանի պատուիրակութեան անդամ եւ ՀՀ Ազգային Ժողովի պատգամաւոր Լիլիթ Գալստեան յատուկ հանդիպում ունեցած էր վարչապետ Տէյվիտ Էպլի հետ եւ արձարծած Արցախի ազգային ինքնորոշման իրաւունքի ու շրջափակման հարցերը: Անտոնեան նաեւ վստահեցուց վանգուվերահայ համայնքի անվերապահ զօրակցութիւնը վարչապետին՝ յաւաքիկայ ընտրութիւններուն գծով: Վարչապետ Էպլի բարձր գնահատեց Հայ համայնքի զօրակցութիւնը եւ վերահաստատեց Հայ Դատի յանձնախումբին եւ համայնքի անդամներուն ամենամեայ աւանդութեան վերածուած հրաւէրը՝ ոգեկոչելու Հայոց Յեղասպանութիւնը նահանգային խորհրդարանին մէջ:

Շնորհակալութիւն յայտնելով հրաւէրին համար՝ Վահէ Անտոնեանը վարչապետ Էպլին տեղեկացուց Արցախի եւ Հայաստանի մէջ տիրող իրավիճակներուն մասին, ընդգծելով, որ անցեալի ցեղասպանութիւններու ճանաչման հետ միաժամանակ պէտք է դատապարտել ներկայիս գործադրուող վայրագութիւնները, այդ շարքին՝ 150,000 բնիկ հայերու բռնի տեղահանումը իրենց պապենական դարաւոր հայրենիքէն եւ շարունակուող մշակութային ցեղասպանութիւնը տարածաշրջանի նոր թուրքերուն կողմէ:

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանի ներկայացուցիչները առիթը ունեցան նաեւ առանձնազրոյցներ ունենալու Գանատայի խորհրդարանի անդամ եւ արտակարգ իրավիճակներու նախարար Հարճիթ Սաճանի, ինչպէս նաեւ Պրիթիշ Գոլումպիա նահանգի առողջապահութեան նախարար Ատրիան Տիքսի, փոխ վարչապետ Մայք Ֆարնուորթի, նախարար Պրուս Ռալֆսոնի եւ նախարար Էնն Քանկի հետ:



Պրիւքէլի մէջ բացումը կատարուեցաւ ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի յանձնախումբին Ընդհանրական Գրասենեակին



Կարդալ էջ 3

HONDA GABRIEL

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Պելճիքայի Ծերակոյտին Այլ Արցախի Գծով Քննարկումներ

Հայ Դատի Կեդրոնական գրասեն-
եակը կը հաղորդէ, որ 25 Մարտին, Պել-
ճիքայի Ծերակոյտին մէջ տեղի ունեցաւ
«Աշխարհաքաղաքական զարգացումնե-
րը Հարաւային Կովկասի մէջ. կիզակէտի
տակ՝ Հայաստան եւ Լեռնային Ղարա-
բաղ/Արցախ» խորագիրով կլոր սեղան-
քննարկումը:

Քննարկումը տեղի ունեցաւ ծերա-
կուտական Մարք Տեմեսմէյքըրի եւ ՀՅԴ
Հայ Դատի Եւրոպայի գրասենեակին հա-
մագործակցութեամբ, եւ անոր մասնակ-
ցեցան պելճիքացի խորհրդարանական-
ներ, դիւանագէտներ, լրագրողներ եւ
միութիւններու ներկայացուցիչներ:

Կլոր սեղանի չորս հիմնական բա-
նախօսներն էին՝

— Էյս Վան Հուֆ՝ Պելճիքայի դաշ-
նակցային խորհրդարանի արտաքին յա-
րաբերութիւններու յանձնաժողովի նա-
խագահ

— Փօլ Միլերը՝ միջազգային բա-
նակցութիւններու վերլուծաբան եւ
«Քլինկենտայլ» հիմնարկի համահիմ-
նադիր

— Գեղամ Ստեփանեան՝ Արցախի
Հանրապետութեան մարդու իրաւունք-
ներու պաշտպան

— Բենիամին Պօղոսեան՝ «Ապրի
Արմէնիա» հիմնարկի աւագ գիտաշխա-
տող:

Համաժողովի հիմնական նպատակն
էր՝ համապարփակ վերլուծութեան են-
թարկել Սեպտեմբեր 2020էն ի վեր Հա-
րաւային Կովկասի տարածաշրջանին մէջ
աշխարհաքաղաքական զարգացումները,
մասնաւորաբար՝ Արցախի հակամարտու-
թեան լոյսին տակ:

Բանախօսները միջազգային իրա-
ւունքի, մարդու իրաւունքներու եւ մի-
ջազգային հանրութեան արձագանգի
տեսանկիւններէն ներկայացուցին տա-
րածաշրջանային զարգացումները: Յա-
տուկ ուշադրութեան արժանացան միջ-
նորդական ջանքերու կարեւորութեան
վերաբերող քննարկումները՝ անդրա-
դարձ կատարելով յատկապէս Եւրոպա-
կան Միութեան դերին: Քննարկման
մասնակցողները փորձեցին նախանշել
սպագայ հեռանկարները, հնարաւոր
զարգացումները եւ յատկաբայերը՝ Ար-
ցախի հայերու անօտարելի իրաւունքնե-
րը պաշտպանելու համար:

Նախաձեռնութեան բացման խօս-
քերը արտասանեցին ծերակուտական Տե-
մեսմէյքըրը, Եւրոպական Միութեան մօտ
Հայաստանի ներկայացուցչութեան ղե-
կավարի տեղակալ Վարդան Սարգսեան
եւ Հայ Դատի Եւրոպայի գրասենեակի
նախագահ Գասպար Կարապետեան:

«Այցելելով Լեռնային Ղարաբաղ
եւ Ատրպէյճանի հետ սահմանամերձ
շրջանը՝ անմիջականօրէն տեսած եմ հա-
կամարտութեան ազդեցութիւնը: Ատր-
պէյճանի յարձակողապաշտութիւնը եւ
Արցախի ցեղային գտումները միանգա-
մայն անընդունելի են: Մենք պէտք է
ճշտուիմք գործադրեմք Եւրոպական Միու-
թեան եւ միջազգային հանրութեան
վրայ՝ վերջ տալու անպատճելիութեան:
Միջին Արեւելքի եւ Ուրբանիոյ վրայ
կեդրոնանալով, Հարաւային Կովկասը

չանտեսելը կարեւոր է: Մենք չենք
կրնար անտեսել այս տարածաշրջանի
տառապանքը եւ անկայունութիւնը»,
չեչտեց Տեմեսմէյքըրը:

«Վերջերս Արցախի խորհրդարանի
չէնքին քանդուումը կը խորհրդանշէ
Ատրպէյճանի կողմէ շարունակապէս
«մշակութային գտումը»: Մենք չենք
կրնար լուել այս հարցին դիմաց: Եւրո-
պական Միութիւնը պէտք է վերագնա-
հատէ իր յարաբերութիւնները Ատրպէյ-
ճանի հետ եւ օգտագործէ իր քաղաքա-
կան գործիքակազմերը՝ դադրեցնելու
հայերու հիմնարար իրաւունքներու
խախտումները: Պէտք է եւրոպական
մակարդակի վրայ նկատի ունենալ
պատժամիջոցներ կիրարկելու տարբերա-
կը», իր խօսքին մէջ ըսաւ Էյս Վան
Հուֆ:

Փօլ Միլերը, իր կարգին անդրա-
դառնալով բանակցային գործընթացին՝
ըսաւ. «Բանակցութիւնները յաջողու-
թեամբ աւարտելու համար պէտք է հա-
մաբնագիրին մէջ փոփոխութիւն ըլլայ:
Ուժը եւ բանակցութիւնները միասին
կ'ընթանան: Հայաստան չի կրնար բա-
նակցութիւններու մէջ մտնել թուլացած
դիրքերով: Այսպիսով՝ Հայաստանի հա-
մար հրամայական է՝ ուժեղացնել իր
ուղղակի հնարաւորութիւնները եւ
ամբարձրել իր դիրքերը բանակցային
սեղանին շուրջ՝ տարածաշրջանին մէջ
կայունութեան համար»:

Արցախի Հանրապետութեան մար-
դու իրաւունքներու պաշտպան Գեղամ
Ստեփանեան անդրադարձաւ Արցախի
ժողովուրդին դիմաց ծառայած շարու-
նակական մարտահրաւերներուն: «Լեռ-
նային Ղարաբաղի ժողովրդի տառա-
պանքները շարունակուեցին 2023
թուականի Սեպտեմբերի բռնի տեղահա-
նութիւնից յետոյ: Հայաստան ժամանե-
լուն պէս Արցախի ժողովուրդը շարու-
նակեց բախուել բազմաթիւ մարտահրա-
ւերներին՝ նրանց կացութեան կարգավի-
ճակից սկսած մինչեւ սոցիալական (ըն-
կերային), բնակարանային, սննդի եւ աշ-
խատանքի հետ կապուած խնդիրները:
Սեմինարը արժէքաւոր հնարաւորութիւն
է ընձեռում անդրադառնալու այս
խնդիրներին եւ լոյս սփռելու Արցախի
ժողովրդի աւօրեայ պայքարի վրայ,
ինչպէս նաեւ նպաստելու միջազգային
հանրութեան մտքիլիզացմանը (զօրա-
շարժի ենթարկելը)՝ Արցախի ժողովրդի
մարդասիրական կարիքներին եւ իրա-
ւունքներին պաշտպանութեան գործում»,
ըսաւ ան:

Բենիամին Պօղոսեան շեչտեց Հա-
յաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բա-
նակցութիւններու հարցին քննարկումը՝
յայտարարելով. «Կար սկզբունքօրէն թե-
րի տրամաբանութիւն, որ Ադրբեջանի
նկատմամբ հանդարտեցման քաղաքա-
կանութիւնը եւ Լեռնային Ղարաբաղի
Հանրապետութեան կործանման ընդու-
նումը ճանապարհ կը հարթեն Հայաս-
տան-Ադրբեջան խաղաղութեան համար:
Փոխարէնը, դա միայն ստիպեց Ադրբե-
ջանին աւելի ագրեսիւ (յարձակողական)
լինել Հայաստանի նկատմամբ, եւ այժմ
բախուում ենք Ադրբեջանի կողմից նոր

հսկալացիայի (մագլցումի) իրական
սպառնալիքի՝ ռազմավարական նպա-
տակ ունենալով բացել ցամաքային մի-
ջանցք Նախիջևանի եւ Թուրքիայի հետ՝
օկուպացնելով (գրաւելով) Հայաստանի
որոշ հատուածներ»:

Իր խօսքին մէջ, Գասպար Կարա-
պետեան երախտագիտութիւն յայտնեց
ծերակուտական Տեմեսմէյքըրին, բանա-
խօսներուն եւ ներկայներուն՝ արցախա-
հայութեան իրաւունքներուն իրենց
աննկուն հաւատարմութեան համար:
«Այս կլոր սեղանը կը ծառայէ՝ իբրեւ
կարեւոր հարթակ երկխօսութեան խթան-
ման եւ Արցախի հայ բնակչութեան ան-
քակտելի իրաւունքներու պաշտպանու-
թեան վերաբերող ջանքերը յառաջ մղե-
լուն: Պելճիքայի եւ Եւրոպական Միու-
թեան անդամ բոլոր երկիրներուն համար
հրամայական է ճշտուիմք գործադրելը
Ատրպէյճանի վրայ՝ Արցախի ժողովուր-

դին դէմ կատարուած ցեղային գտում-
ներուն համար՝ փաստօրէն վերջ դնելով
Ատրպէյճանի անպատճելիութեան: Մի-
ջազգային հանրութիւնը պէտք է ճշտուի
գործադրէ Ատրպէյճանի վրայ՝ Պաքուի
մէջ գտնուող բոլոր հայ ռազմագերիներ-
ըր եւ պատանդները ազատ արձակելու
համար: Եւրոպական շահերու պաշտ-
պանութիւնը կը մնայ առանցքային՝
տարածաշրջանին մէջ խաղաղութեան,
արդարութեան եւ կայունութեան ապա-
հովման համար», ըսաւ Կարապետեան:

Քննարկումը աւարտեցաւ հար-
ցում-պատասխանի ձեւաչափով, որուն
ընթացքին բանախօսները եւ քաղաքա-
կան գործիչները քննարկեցին Հարաւա-
յին Կովկասի մէջ խաղաղութեան հաս-
տատման եւ Արցախի հայ բնակչու-
թեան հիմնարար իրաւունքներու
պաշտպանութեան հեռանկարային մի-
ջոցները:

Պրիքսէլի մէջ բացումը կատարուեցաւ Հայ դատի Եւրոպայի յանձնախումբին նոր գրասենեակին

Մարտ 24-ին Պրիքսէլի մէջ տեղի ունեցաւ ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի
յանձնախումբին նոր գրասենեակին բացման արարողութիւնը, որ նշանակալի
իրադարձութիւն է անոր հիմնադրութենէն՝ 2002 թուականէն ի վեր:

Ի խորհրդանշում Հայ դատի առաքելութեան օժանդակման՝ կարմիր ժա-
պաւէնը կտրած են Մայք եւ Էվելինա Սարեանները, որոնց ընտանիքին առա-
տաձեռն նուիրատուութեան շնորհիւ ձեռք բերուած էր նոր գրասենեակը: Բաց-
ման արարողութեան ներկայ գտնուած են տասնեակ հիւրեր, որոնց կարգին՝
ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի երկարամեայ բարերարներ Բաֆֆի
Արպանեան եւ Ատոմ Թեմուրեան, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ եւ Հայ դատի
յանձնախումբերուն կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Ուսա-
տուրեան, Եւրոպական միութեան ՀՀ առաքելութեան ղեկավարի տեղակալ
Վարդան Սարգսեան, պելճիքացի պատգամաւորներ, լրագրողներ, հասարակա-
կան գործիչներ, ինչպէս նաեւ Պելճիքայի, Կիպրոսի, Ֆրանսայի, Գերմանիոյ,
Հոլանտայի, Հռոմի եւ Միացեալ Թագաւորութեան հայ համայնքներու ներկա-
յացուցիչներ:

Բացման արարողութեան յաջորդած ընդունելութեան հնչած ելոյթներուն
ընթացքին երախտագիտութեան խօսքեր ձօնուած են բոլոր անոնց, որոնք իրենց
ներդրումը ունեցած են եւ տակաւին կ'ունենան ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի
գրասենեակի աշխատանքներուն: Ներկայները, շեչտելով Հայ դատի Եւրոպայի
գրասենեակին դերը առհասարակ Հայ դատի պաշտպանութեան գործընթացին
մէջ, իրենց բարեմաղթանքները յղած են գրասենեակի ամենօրեայ տքնաշան
աշխատանքին:

Մայք Սարեան, անդրադառնալով օրուան խորհուրդին, նշած է. «Իսկա-
պէս մեծ պատիւ է Պրիքսէլի մէջ նուիրաբերութիւն կատարել ՀՅԴ Հայ դատի
Եւրոպայի գրասենեակին՝ ի յիշատակ մեր հօր՝ Երջանիկ Սարեանի: Երջանիկը,
որ հայերէն կը նշանակէ «Երջանիկ», կը մարմնաւորէ մեր իղձը՝ այս գրասեն-
եակին երջանկութեան աղբիւր դառնալուն բոլոր այն հայերուն համար, որոնք
հաւատարիմ են Հայ դատի յառաջխաղացման ամբողջ աշխարհի տարածքին եւ
յատկապէս Եւրոպայի մէջ: Մեծ յաջողութիւններ կը մաղթենք գրասենեակի
անձնակազմին եւ մեր համայնքի անդամներուն, յուսալով որ աւելի շատ
ձեռքբերումներ կ'ունենանք այս մտալլ օրերուն»:

ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետ-
եան իր խորին երախտագիտութիւնը յայտնելով Մայք Սարեանին եւ անոր ըն-
տանիքին՝ նշած է. «Խորապէս շնորհակալ ենք պարոն Սարեանին եւ անոր ըն-
տանիքին իրենց առատաձեռնութեան համար: Իսկապէս պատիւ է, որ մեր գրա-
սենեակը կը կրէ յանգուցեալ Երջանիկ Սարեանի անունը: Այս գրասենեակը կը
խորհրդանշէ բոլորիս տունը՝ նուիրուած հայ ժողովրդին եւ հայ ժողովրդին ծա-
ռայելուն, առաջ մղելով հայ դատի պայքարը: Մենք հաւատարիմ ենք այդ
նպատակին»:

Նոր գրասենեակին բացումը նշանակալից առաջընթաց է Հայ դատի գրա-
սենեակին համար եւ վերջինս կը վերահաստատէ իր յանձնառութիւնը հայկա-
կան պետականութեան առաջխաղացման եւ Եւրոպայի մէջ Արցախի ժողովուր-
դին հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան:

ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի կեդրոնական գրասենեակ

ADVERTISE YOUR BUSINESS HERE



ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ «ՀՈՐԻՉՈՆ»Ի
ՁԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ
ԴԻՄԵՅԷՐ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ
**CALL JACK VARBEDIAN
(416) 722-9225**

Voyages
HAIG
Travel

Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

**ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

*Նոր Յաւուր՝ **PERMIS DE QUÉBEC**

Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

ՀՕՄ-ի «Սօսէ» եւ «Շուշի» մասնաճիւղերը նշեցին «Կանանց Միջազգային Օր»ը

Կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղերուն, Կիրակի, 10 Մարտ 2024-ին, ժամը 11:00-ին, ՀՄԸՄ-«Կամք»ի «Հայկ Մարզարեան» մարզարանին մէջ տեղի ունեցաւ «Կանանց Միջազգային Օր»-ու տօնակատարութիւնը, նախագահութեամբ ընկճ. Նոյեմի Եաղճեանի:

Ձեռնարկին ներկայ էին ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ ընկճ. Արմինէ Կարապետեան, Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկճ. Լուսին Փալանճեան եւ վարչական անդամներ, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկճ. Զաքար Քէչիչեան, Գանատայի խորհրդարանի անդամ տիկ. Միշէլ Սեթլաքուէ, Լաւալի Renaud շրջանի քաղաքապետական խորհուրդի անդամ ընկճ. Սեդա Թոփուզեան Գուշեան, Մոնթրէալի Cote De Liesse շրջանի քաղաքապետական խորհուրդի անդամ ընկճ. Վանա Նազարեան Եափուճեան, քոյր միութեանց ներկայացուցիչներ, ՀՕՄ-ի ընկեր-ընկերուհիներ եւ բարեկամներ:

Քայլերդներու ունկնդրութեանէն ետք, ձեռնարկի հանդիսավար ընկճ. Կարին Գասապեան բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն, ապա, անդադարձաւ Մարտ 8-ին, որ արդէն 49-րդ տարին է, որ կը նշուի որպէս «Կանանց Միջազգային Օր», լոյս փոխելով պատմութեան ընթացքին եւ աշխարհի տարածքին կանանց արձանագրած նուաճումներուն եւ անոնց դրսեւորած աննկուն կամքի արտայայտութիւններուն վրայ:

ՆՍՕՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը 2024 տարին հռչակած է «Մարդու զարգացման տարի», եւ ՀՕՄ-ը գիտակցելով անոր կարեւորութեան, ճիշդ չի խնայեր ներդրաւելու երիտասարդ տարրեր, անոնց վստահելով զանազան պաշտօններ եւ այս միջոցով արժեւորելով իրենց արդիական գործելակերպը եւ ներդրումը:

Ընկճ. Կարին Գասապեան, իր բացման խօսքի աւարտին, շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, որոնք իրենց մասնակցութեամբ եկած են ապացուցելու իրենց յանձնառութիւնը՝ ՀՕՄ-ի գործունէութեան նկատմամբ, եւ շնորհակարանց բոլոր ջանասէր հայուհիներուն տօնը:

Ապա, օրուան հանդիսավար ընկերուհիներ, ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց «Կանանց Միջազգային Օր»-ու տօնակատարութեան պատգամները:

մարեր ընկճ. Անի Թորիկեան Պապիկեանի կենսագրականը:

Բանախօս ընկերուհին, առաջին հերթին, շնորհակալութիւն յայտնեց ՀՕՄ-ի զոյգ մասնաճիւղերու վարչութիւններուն, որոնք այս ձեռնարկին ընդմէջէն, իր մտածումները ներկաներուն հետ բաժնելու առիթը ստեղծեցին: Ան շնորհակարանց ՀՕՄ-ը եւ բոլոր ներկաները «Կանանց Միջազգային Օր»-ու առթիւ եւ այս օրը յարմար նկատեց ո՛չ միայն գնահատելու կիները՝ իրենց ձեռքբերած նուաճումներուն համար, այլ նաեւ անդադարձաւ այն կարեւոր եւ եզակի պարտականութիւններուն, որ մանաւանդ հայ կիները ստանձնած են եւ պիտի շարունակեն ստանձնել իրենց իրենց անձին հանդէպ, ինչպէս նաեւ իրենց ընտանիքներուն, կազմակերպութիւններուն, ազգին եւ հայրենիքին հանդէպ, միաժամանակ դիմագրաւելով նորօրոյ աշխարհի մարտահրաւրէրներ:

Մեկնակէտ ունենալով ՆՍՕՏ Արամ Ա. Կաթողիկոսի 2024 տարուան համար Հայաստանի Կոնգրէսին բովանդակութիւնը, ընկճ. Անի Թորիկեան Պապիկեան մարդու զարգացման թիրաբար անյետաձգելի առաջնահերթութիւն նկատեց, ապահովելու համար մեր կազմակերպութիւններուն գոյատեւումը, ընդգծելով որ հարկաւոր է գրաւել մարդու զարգացման ոլորտը եւ պատրաստել նոր մարդու: Ապա, ընկերուհին անդադարձաւ կեանքի պայմաններու բերումով, ազատ եւ տրամադրելի ժամերու նուազումի երեւոյթին, որուն իբրեւ արդիւնք միութեան կարեւոր գործունէութեան համար տրամադրելի մարդու զարգացում է. ընկերուհին թուեց նաեւ այդ նուազումի պատճառները:

Շարունակելով իր խօսքը, օրուան պատգամները ընդգծեց այն երեք հանգրուանները, որոնք կարեւոր են մարդու զարգացման ճանապարհին համար. ծրագրում, պահպանում եւ զարգացում, առանձնաբար մանրամասնելով իւրաքանչիւր հանգրուան:

Իր խօսքի վերջին բաժնով եւ մարդու զարգացման ճանապարհին յաջողութիւնը ապահովելու համար, ընկճ. Անի ներկայացուց տասնամեակի ցանկ մը, նշելով հայկական այն առածը որ կ'ըսէ. «Աշխատանքը կը գեղեցկացնէ մարդը», միաժամանակ աւելցնելով. «Իսկ կամաւոր աշխատանքը՝ առաւել եւս», եւ ներկաներուն կոչ ուղղեց յայտարարելով. «Եկէ՛ք, առանց վարանելու, միասնաբար



գործի լծուինք»:

Սոյն ձեռնարկին ընթացքին, գեղարուեստական բաժնով ելոյթ ունեցաւ Քեպէգի Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի «Անի» պարախումբը, ներկայացնելով «Ուզուն տարա» եւ «Եարիտա» պարերը, գեղարուեստական դեկորացիան պարերը, Լեւոն Արապեանի:

Ինչպէս վերը յիշեցինք, այս տօնակատարութիւնը կը վայելէր ընկճ. Նոյեմի Եաղճեանի նախագահութիւնը: Հանդիսավար ընկերուհին ամփոփ գիծերու մէջ ներկայացուց ընկճ. Նոյեմի կենսագրական գիծերը, ապա օրուան նախագահուհին բեմ բարձրանալով ներկաներուն փոխանցեց իր սրտի խօսքը, ընդգծելով որ «Կանանց Միջազգային Օր»-ու լաւագոյն ներկայացուցիչը ՀՕՄ-ն է, որ իր կարգին առիթ տուաւ հայ կինը զարգանալու: Ընկերուհին յաջողութիւն մաղթեց այս մեծ կազմակերպութեան աշխատանքներուն, որ կը շարունակէ ներշնչել հայ կիները:

«Կանանց Միջազգային Օր»-ու միացեալ ձեռնարկի ատենապետ ընկճ. Լիւսի Շահինեան գեղեցիկ ծաղկեփունջեր նուիրելով, իր շնորհակալութիւնը արտայայտեց պատգամներ ընկերուհիներուն եւ օրուան նախագահուհիին:

Ամէն տարի, «Կանանց Միջազգային Օր»-ու առթիւ, Մոնթրէալի «Սօսէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղերը աւանդութիւն դարձուցած են պատուել արժանաւոր հայուհիներ եւ ՀՕՄ-ուհիներ: Այս տարի որոշած են պատուել երեք անձնաւորութիւններ, որոնց վաստակը կը դրոշմուի ո՛չ միայն մեր, այլ նոյնիսկ Գանատայի եւ Սփիւռքի հայկական գաղութներուն մէջ, ինչպէս նաեւ իր անդրադարձը կ'ունենայ հայ եւ օտար շրջանակներուն:

նակներու մէջ՝ աշխարհի չորս ծագերուն:

Ընկճ. Անի Թաշճեան բեմ բարձրանալով, յաջողաբար յայտարարեց երեք ՀՕՄ-ուհիներու անունները՝ Սիլվա Էհրամեան Պաշտեան, Թամար Շահինեան Փոլատեան եւ Լայլ Մանճիկեան Եափուճեան եւ առանձնաբար ներկայացուց իւրաքանչիւր ընկերուհիի մանրամասն կենսագրութիւնը: Ապա, զոյգ մասնաճիւղերու ատենապետուհիները ընկերուհիներուն յանձնեցին գնահատանքի յուշանուէրներ: Երեք ընկերուհիները, իրենց կարգին, յուշանուխառն գագուցներով, իրենց սրտի խօսքը փոխանցեցին ներկաներուն, իրենց շնորհակալական արտայայտութիւնները ներկայացնելով նաեւ զոյգ մասնաճիւղերու վարչութիւններուն, կազմակերպիչ յանձնախումբին եւ մասնաւորաբար՝ Հայ Օգնութեան Միութեան:

Ձեռնարկի աւարտին, միացեալ յանձնախումբի ատենապետ ընկճ. Լիւսի Շահինեան հանդէս եկաւ շնորհակալական խօսքով, առաջին հերթին երախտագիտութիւն յայտնելով բոլոր անոնց, որոնք քաջակերպեցին այս ձեռնարկը եւ իրենց ներկայութեամբ օգտակար հանդիսացան անոր յաջողութեան: Յատուկ շնորհակալութիւն յայտնեց օրուան նախագահուհի ընկճ. Նոյեմի Եաղճեանին եւ պատգամներ ընկճ. Անի Թորիկեան Պապիկեանին, կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն, գեղարուեստական բաժնի մասնակիցներուն, թեքնիք բաժնի պատասխանատուներուն, նաեւ բոլոր անոնց, որոնք անսակարկ նուիրումով սատարեցին սոյն ձեռնարկի յաջողութեան:

Գոհար Թորիկեան Գարակէօզեան

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ 65-ամեակին առթիւ հոգեշունչ ելոյթով հանդէս եկաւ Trio de l'Île նուագախումբը

Օրհնութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղ. Տէր Բաբգէն Սրբ. Արք. Չարեանի, համահովանաւորութեամբ տէր եւ տիկին Ճորճ եւ Սիմէ Արմոյեանի եւ տիար Յակոբ Իսթեմեանի, կազմակերպութեամբ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գառնիկ Ա. ՔՏՆ. Գոյունեանի, Կիրակի, 17 Մարտ 2024-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Collège Regina Assumpta-ի Marguerite-Bourgeoys շքեղ սրահին մէջ, տեղի ունեցաւ նուագահանդէս՝ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ 65-ամեակին առթիւ, կատարողութեամբ Trio de l'Île նուագախումբին, որուն ղառնակահարն է Փաթիլ Հարպոյեան Միլոսիեան, ջութակահարը՝ Ուլիանա Տրուկովա, թաւջութակահարը՝ Տոմինիք Պօսէթուր-Օսթիկի:

Բարի գալուստի խօսք արտասանեց Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամ եւ եկեղեցւոյ 65-ամեակի յանձնախումբի ներկայացուցիչ տիկին Նուշիկ Էլոյեան, որմէ ետք նուագախումբը հանդէս եկաւ Կոմիտասէն երկու նուագով՝ «Երկիրքն ամպել ա» եւ «Այ, ալլուդա», որոնք երազային ու քաղցր թրթռացումներով ողորցնին սրահը, եւ որոնց մշակումը կատարած էր Սերգէյ Ալամազեան, իսկ պատշաճեցումը՝ Փաթիլ Հարպոյեան: Անկէ ետք հնչեց Աննօ Բաբբաջանեանէն՝ դաշնակի, ջութակի եւ թաւջութակի նուագախումբը՝ թուրքական, գուրաբի, գուրաբի եւ խորագագայ պիլքաւորումներով:

Յայտագրին երկրորդ մասը կը կազմէր բոլորովին նոր ստեղծագործութիւն մը՝ Տէր Գառնիկ Ա. ՔՏՆ. Գոյունեանի ընտրութեամբ Հայ եկեղեցւոյ շարականներէն «Մեծացուցէ» ներու փունջ մը, որուն ստեղծագործական մշակումը կատարած էր երաժշտահան Վահրամ Սարգսեան: Ան ինը «Մեծացուցէ» ներ իրարու զօդելով՝ կարծէք պատու մը զարգացուցած էր. պատու՝ որ Յիսուսի հետ սկիզբէն մինչեւ անոր խաչելութիւնը Աստուածածնի փորձառութիւնները կը ներկայացնէր:

Նշենք, որ «Մեծացուցէ» ներուն հեղինակութիւնը կը վերագրուի 5-րդ դարու դէմքերէն Մովսէս Բերթողի: Անոնք նուիրուած են Աստուածածնի եւ կը մեծարեն զայն:



Armenian National Committee of Canada (ANCC) – JOB OPENING: Government Relations Director



Job Title: Government Relations Director
Organization: Armenian National Committee of Canada (ANCC)
Location: Preferably on-site in Ottawa or Hybrid (Frequent travel to Ottawa and other cities in Canada)
Reports to: ANCC National Board
Job Type: Full-time, Permanent
Deadline: April 27, 2024

About the Armenian National Committee of Canada (ANCC):

The ANCC is the largest and most influential Armenian-Canadian grassroots human rights organization. Dedicated to advancing the concerns of the Armenian-Canadian community, the ANCC actively works on a broad spectrum of issues and collaborates with a network of offices, chapters, and supporters across Canada and affiliated organizations globally. Committed to eliminating human rights abuses, the ANCC plays a pivotal role in advocating for justice and equality nationally and internationally.

Position Overview:

The ANCC is seeking a dynamic and motivated individual to fill the role of Government Relations Director. This position will operate at the federal level, coordinating with local chapters to support the national office. The successful candidate will play a critical role in shaping and executing the organization's government relations strategy, fostering key relationships, and advancing the human rights agenda for the Armenian-Canadian community. Full training will be provided.

Key Responsibilities:

Government Relations Strategy:

- Develop and implement a comprehensive government relations strategy aligned with the ANCC's mission and goals.
- Monitor legislative and policy developments at the federal, provincial, and municipal levels that impact the Armenian-Canadian community.

Advocacy and Lobbying:

- Engage with elected officials, government agencies, and relevant stakeholders to advocate for the ANCC's positions and priorities.
- Develop and maintain relationships with key decision-makers to influence policy outcomes.

Coordination and Collaboration:

- Collaborate with local chapters to ensure cohesive and effective advocacy efforts on all levels of government.
- Work closely with affiliated organizations, NGOs, and human rights groups to amplify the ANCC's impact.

Research and Analysis:

- Conduct policy research and analysis to inform the ANCC's advocacy initiatives.
- Prepare briefing materials, policy papers, and reports for internal and external stakeholders.

Public Relations:

- Represent the ANCC in public forums, conferences, and media engagements to communicate key messages and promote the organization's objectives.
- Build and maintain positive relationships with media outlets to enhance visibility.

Community Engagement:

- Engage with the Armenian-Canadian community to understand their concerns and incorporate community perspectives into advocacy efforts.

Qualifications:

- Bachelor's degree in political science, international relations, communications, or a related field.
- Strong knowledge of Canadian political and legislative processes.
- Proven experience in government relations, advocacy, or a related field, with a focus on human rights issues, is an asset.
- Excellent communication, negotiation, and relationship-building skills.
- Ability to work independently and collaboratively in a fast-paced environment.
- Ability to work irregular hours.
- Ability to learn on the job.
- Familiarity with the Armenian-Canadian community and its issues.
- English essential. Bilingualism is an asset.
- Knowledge of Armenian is an asset.

Compensation:

The salary for this position will be commensurate with the candidate's qualifications, experience, and education.

Application Process:

Interested candidates are invited to submit a cover letter and resume to national.office@anccanada.org by April 27, 2024.

We thank all applicants for their interest, but only those selected for an interview will be contacted.

///

Comité national arménien du Canada (CNAC) – POSTE VACANT: Directeur des relations gouvernementales

Titre du poste: Directeur des relations gouvernementales
Organisation: Comité national arménien du Canada (CNAC)
Lieu de travail: De préférence sur place à Ottawa ou à Hybrid (déplacements fréquents à Ottawa et dans d'autres villes du Canada)
Rend compte à: Conseil national de la CNAC
Type d'emploi: Temps plein, Permanent
Date limite: 26 avril 2024

A propos du Comité national arménien du Canada (ANCC) :

La CNAC est la plus grande et la plus influente organisation de défense des droits de l'homme de la communauté arménienne du Canada. Dédié à la promotion des préoccupations de la communauté arméno-canadienne, la CNAC travaille activement sur un large éventail de questions et collabore avec un réseau de bureaux, de sections et de sympathisants à travers le Canada et avec des organisations affiliées dans le monde entier. Engagé dans l'élimination des violations des droits de l'homme, la CNAC joue un rôle essentiel dans la défense de la justice et de l'égalité au niveau national et international.

Aperçu du poste:

La CNAC est à la recherche d'une personne dynamique et motivée pour occuper le poste de directeur des relations gouvernementales. Le titulaire de ce poste travaillera au niveau fédéral, en coordination avec les sections locales pour soutenir le bureau national. Le candidat retenu jouera un rôle essentiel dans l'élaboration et l'exécution de la stratégie de relations gouvernementales de l'organisation, en favorisant les relations clés et en faisant progresser le programme des droits de l'homme pour la communauté arméno-canadienne. Une formation complète sera fournie.

Principales responsabilités:

Stratégie de relations gouvernementales:

- Elaborer et mettre en œuvre une stratégie globale de relations gouvernementales conforme à la mission et aux objectifs de la CNAC.
- Suivre les développements législatifs et politiques aux niveaux fédéral, provincial et municipal qui ont un impact sur la communauté arméno-canadienne.

Plaidoyer et lobbying:

- S'engager auprès des élus, des agences gouvernementales et des parties prenantes concernées pour défendre les positions et les priorités de la CNAC.
- Développer et entretenir des relations avec les principaux décideurs afin d'influencer les résultats politiques.

Coordination et collaboration:

- Collaborer avec les sections locales afin d'assurer la cohésion et l'efficacité des efforts de plaidoyer à tous les niveaux du gouvernement.
- Travailler en étroite collaboration avec les organisations affiliées, les ONG et les groupes de défense des droits de l'homme afin d'amplifier l'impact de la CNAC.

Recherche et analyse:

- Mener des recherches et des analyses politiques afin d'éclairer les initiatives de plaidoyer de la CNAC.
- Préparer des documents d'information, des documents politiques et des rapports pour les parties prenantes internes et externes.

Relations publiques:

- Représenter la CNAC dans les forums publics, les conférences et les engagements médiatiques afin de communiquer des messages clés et de promouvoir les objectifs de l'organisation.
- Établir et maintenir des relations positives avec les médias afin d'améliorer la visibilité.

Engagement communautaire:

- S'engager auprès de la communauté arméno-canadienne pour comprendre ses préoccupations et intégrer les perspectives de la communauté dans les efforts de plaidoyer.

Qualifications:

- Licence en sciences politiques, en relations internationales, en communication ou dans un domaine connexe.
- Solide connaissance des processus politiques et législatifs canadiens.
- Une expérience avérée en matière de relations gouvernementales, de plaidoyer ou dans un domaine connexe, avec un accent sur les questions relatives aux droits de l'homme, est un atout.
- Excellentes compétences en communication et négociation. Capacité d'établir des bonnes relations avec les partenaires et les parties prenantes.
- Capacité à travailler de manière indépendante et en collaboration dans un environnement en constante évolution.
- Capacité à travailler selon des horaires irréguliers.
- Capacité à apprendre sur le tas.
- Connaissance de la communauté arméno-canadienne et de ses enjeux.
- L'anglais est essentiel. Le bilinguisme est un atout.
- La connaissance de l'arménien est un atout.

Rémunération:

Le salaire pour ce poste sera proportionnel aux qualifications, à l'expérience et à la formation du candidat.

Processus de candidature:

Les candidats intéressés sont invités à soumettre une lettre de motivation et un curriculum vitae à national.office@anccanada.org avant le 27 avril 2024.

Nous remercions tous les candidats pour leur intérêt, mais seules les personnes sélectionnées pour une entrevue seront contactées.

Խմբագրական

Արցախէն Տաուշ՝ իշխանութիւններու պետականաբանդման կորստաբեր վարքագիծը

Վարչապետ Փաշինեանի Տաուշի սահմանամերձ գիւղերու բնակիչներու հետ հանդիպումը մէկ նպատակ կը հետապնդէր. նոր պատերազմով ահաբեկել գիւղացիները եւ սարսափի մթնոլորտ ստեղծել, որ եթէ Երեւանը չկատարէ որոշ սահմանամերձ գիւղերու Ատրպէյճանին զիջելու Պաքուի պահանջը, ապա՝ պատերազմը անխուսափելի կընայ դառնալ:

Պատերազմի սպառնալիքով ժողովուրդին կը պարտադրուին նոր զիջումներ, մինչ Հայաստանի հիւսիսային պաշտպանութեան պատուարները ամբողջութեամբ կը կազմաքանդուին: Անկանխատեսելի վտանգաւոր հետեւանքներով լի է իշխանութիւններու անձնատուութեան այս նորագոյն արարը, երբ տարածքներու եւ բնակավայրերու զիջումով անվերահսկելի կը դառնայ երկրի ազատ տեղաշարժի համակարգը, կը վտանգուին հաղորդակցութեան ճանապարհները, ուժանիւթի եւ կազատարերու տարանցման ուղիները ու ջրային պաշարները:

Այս ընթացքով, Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը, Արարատի, Վայոց Ձորի, Սիւնիքի, Գեղարքունիքի եւ Տաուշի ռազմավարական նշանակութիւն ունեցող պաշտպանական մեր պատուարները կը յայտնուին թշնամիի վերահսկողութեան տակ: Հայաստանի հիւսիսային դարպասի պաշտպանական բնագծի ռազմական նշանակութիւն ունեցող բնակավայրերու, բարձունքներու եւ մարտական դիրքերու զիջումով Պաքուի ռազմական անմիջական վերահսկողութեան ներքոյ պիտի յայտնուին Հայաստանի վարչատարածքային միաւորներէն 5-ը:

Արցախը բռնազրաւելէ ետք, Պաքուի իշխանութիւնները հաշտութեան պայմանագիր ստորագրելու կամեցողութիւն ցուցաբերելէ աւելի, յստակ մարտավարութեամբ Հայաստանի ինքնիշխան տարածքները պահանջելով եւ իւրացնելով լծուած են «Արեւմտեան Ատրպէյճան»ի ծրագիրը կեանքի կոչելու գործնական քայլերուն: Բնականաբար, ատրպէյճանական կողմը 4, 6 կամ 8 գիւղական բնակավայրերով պիտի չզոհանայ եւ ամենայն հաւանականութեամբ, շուտով սկսի պահանջել Հայաստանի քաղաքատիր բնակավայրերը երիզող տարածքները:

Արցախեան Պատերազմի նախօրեակին, իշխանութիւններու կողմէ 2020 թուականի Յուլիսին հրապարակուած Հայաստանի Հանրապետութեան ազգային անվտանգութեան ռազմավարութեան դրոյթներուն մէջ ամրագրուած «Արցախի Անվտանգութեան ապահովում» ենթախորագրի 4.25 կէտը կը նշէ. «Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս Արցախի անվտանգութեան երաշխաւոր, աջակցում է Արցախի իշխանութիւններին Ատրպէյճանի ռազմական ագրեսիայից եւ հարկադրանքից իրենց բնակչութեանը պաշտպանելու գործում. Հայաստանի Հանրապետութիւնը կը կանխարգելի Արցախի ազգաբնակչութեան բնաջնջման կամ բռնազաղթեցման ցանկացած նոր փորձ»: Փաշինեանի վարչակարգը ոչ միայն չկրցաւ երաշխաւորել Արցախի անվտանգութիւնը՝ այլեւ անկարող եղաւ կանխա-

կայելու Արցախի հայաթափումն ու արցախահայութեան բռնազաղթը: Այս է Փաշինեանի վարչակարգի ռազմաքաղաքական ճախող համակարգը:

Գործող իշխանութիւնները ճախողած են ժողովրդավարական արժէքներու արմատաւորման, դատական իշխանութեան անաչառութեան, զինուած ուժերու մարտունակութեան եւ արտաքին քաղաքականութեան արդիւնաւէտութեան իրենց առաջադրանքներուն մէջ: Զախողած են պետութեան տարածքային ամբողջականութիւնը, սահմաններու անձեռնմխելիութիւնը եւ բնակչութեան ֆիզիքական գոյութիւնը ապահովելու՝ ազգային անվտանգութեան հիմնարար արժէքները իրականացնելու իրենց առաքելութեան մէջ:

Տաուշի խնդիրը միայն տաւուչցիներու խնդիրը չէ՛, համայն հայ ազգի խնդիրն է: Ազգակործան եւ կորստաբեր իշխանական խմբաւորութեան դէմ միասնաբար պայքարելու կամք ցուցաբերելով միայն կարելի է վերականգնել եւ վերակազմակերպուել, եւ այդ մէկը առաջին հերթին կ'ենթադրէ ժողովուրդի զանգուածները վերստին զգաստացնել՝ որ իր հողին ու իրաւունքներուն տէր կընայ ըլլալ միայն ու միայն այս իշխանութեանց հեռացումով: Ե՛ւ այս բոլորը ի մի բերելով, ազգովին պէտք է հասկնանք, որ վարչապետին եւ իր վարչակարգին կողմէ մեզի հրամցուածը խաղաղութեան դարաշրջանն է՝ այլ՝ Նուստատցու մի դարաշրջանն է:

«Հորիզոն»ի Խմբագրական

Արցախէն դուրս եկանք միայն մէկ յոյսով ու խոստումով՝ ետ վերադառնալ Արցախ. ԱՀԱԸ Արցախի ներկայացուցիչ Վիկտոր Կարապետեան

Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը (ԱՀԱԸ) հիմնուած է 1918-ին, Հայ Աւետարանական Միութեան Արեւելեան Նահանգներու Տարեկան Համաժողովին: Այդ օրերուն անոնց կիզակէտն էր Յեղասպանութենէն հրաշքով փրկուած եւ Սուրիոյ անապատներուն մէջ յայտնուած մեր ժողովուրդի գաւակներուն օգնութեան ձեռք երկարել: Այսօր ԱՀԱԸ շուրջ 24 երկիրներու մէջ կը գործէ եւ կ'օժանդակէ բոլոր հայ կարիքաւորներուն:

ԱՀԱԸ-ի Արցախի մէջ գործունէութեան մասին իրազեկ դառնալու համար ընկերակցութեան Արցախի ներկայացուցիչ Վիկտոր Կարապետեանի հետ «Հորիզոն»-ի հարցազրոյցին ընթացքին ան յայտնեց, թէ սփիւռքահայ այս բարեգործական կազմակերպութիւնը Արցախի առաջին պատերազմէն անմիջապէս ետք, 1995 թուականին, գրասենեակ հիմնած է Ստեփանակերտի մէջ, եւ այնուհետեւ յառաջիկայ ամիսներուն, տարածուելով Արցախի ամբողջ տարածքին, հասած է Մարտակերտ, Ասկերան, Շուշի եւ Հաղարտ, ուր իր սրբազան առաքելութիւնը եղած է մարդասիրական օժանդակութիւն հասցնել մեր ժողովուրդի գաւակներուն:

Կարապետեան անդրադառնալով Արցախի մէջ, նախքան պատերազմ 1995-էն մինչեւ 2023 թուականի Սեպտեմբեր 19-20, ընկերակցութիւնը բնաւ չէ դադարած գործելէ, ըլլալ այդ 2020 թուականի 44-օրեայ պատերազմին, թէ 10 ամսուան շրջափակումի օրերուն: Ան կը պատմէ, թէ այն ժամանակ, երբ փակ էին ճանապարհները, անոնք բաւականին սնունդ հասցուցած են գիւղեր, յատկապէս նորածններու կաթ եւ այլ տեսակի սննդեղէն: Ան նոյնիսկ նշեց, թէ Արցախի Հանրապետութիւնը զիմած է ընկերակցութեան, որպէսզի օժանդակութիւն հասցնեն բժշկական տարբեր կեդրոններու: Այս բոլորով հանդերձ ընկերակցութիւնը շրջափակման ընթացքին յաջողած է ճամբարներ կազմակերպել, երբ երկտրականութիւն ու կազ չկային, չկային նաեւ փոխադրամիջոցներ, անոնք հետիոտն օրական մի քանի քիլոմետր կտրելով կը հասնին շրջակայ գիւղեր եւ երեսաններուն համար այնտեղ ծրագրեր կ'իրականացնեն,

փորձելով այդ անյոյս վիճակին մէջ յոյսով եւ լոյսով ողողել երեխաներուն հոգիները:

Արցախի ներկայացուցիչը յիշելով ընկերակցութեան իրագործած ծրագրերը ըսաւ, թէ ընկերակցութիւնը յատուկ ուշադրութիւն կը դարձնէր կրթական ոլորտին, հիմնելով մանկապարտէզներ Ստեփանակերտի, Շուշիի, Մարտակերտի, Ասկերանի եւ Հաղարտի մէջ, ուր նաեւ շրջակայ գիւղերէն երեխաները կու գան յաճախելու այդ մանկապարտէզները: Ընդհանուր հաշուարկով աւելի քան 400 երեխայ ունեցած են այդ մանկապարտէզներուն մէջ: Անոնք ունեցած են նաեւ ցերեկային կեդրոններ՝ նախատեսուած դպրոցական երեխաներու համար Շուշիի եւ Ասկերանի մէջ: Ան յայտնեց նաեւ, թէ եթէ այս դէպքերը չպատահէին՝ Ստեփանակերտի մէջ եւս պիտի հիմնուէր ցերեկային կեդրոն: Այս կեդրոններուն մէջ եղած են դպրոցական տարիքի աւելի քան 60 երեխաներ, որոնք հնարաւորութիւն ունեցած են հոն պատրաստելու իրենց դասերը, ինչպէս նաեւ իրենց հմտութիւններն ու կարողութիւնները զարգացնելու՝ մասնագէտ ուսուցչակազմի օգնութեամբ: Ընկերակցութիւնը նաեւ իրականացուցած է ճամբարներ, որոնք կրթական եւ հոգեւոր դաստիարակութիւն ջամբած են տարբեր տարիքի երեխաներու՝ մանուկներու 8-12 տարեկան, պատանիներու 12-16, եւ երիտասարդներու 16-էն վեր: Կարապետեան կը հաւատայ, որ այս ծրագրերը ժամանակաւորապէս դադարած են եւ հետագային, Տիրոջ կամօք, կրկին պիտի վերականգնին:

Արցախի մէջ սանձազերծուած վերջին պատերազմին ընթացքին, երբ կորսնցուցինք կարգ մը բնակավայրեր, կ'ըսէ ան, մեր հայրենակիցները նախ հաստատուեցան Արցախի սահմանամերձ գիւղեր: Ընկերակցութիւնը անմիջապէս սկսած է պարբերաբար այցելութիւններ կատարել սահմանամերձ գիւղեր եւ օգնել տեղահանուած արցախահայութեան: Անոր յաջորդեց արդէն Արցախի հայաթափումը եւ արցախահայութեան բռնազաղթը, եւ որովհետեւ ընկերակցութեան առաքելութեան կիզակէտն է հայ մարդն ու անոր արժանապատիւ եւ որակեալ կեանք ապահովելը, Հայաստանի մէջ

անոնց կարիքներուն հասնելու նպատակաւ որդեգրուած է Revive ծրագիրը: Այս ծրագիրը ունի երկու տարբերակ: Առաջինը ընկերակցութեան գործունէութիւն ծաւալող 5 մարզերուն մէջ արցախահայութեան տրամադրել 6-9 ամսուան տնավարձք եւ լուծել աշխատանքի հարցը, իսկ երկրորդը այս մարզերէն դուրս մեր հայրենակիցներուն տրամադրել միանգամայն նիւթական օժանդակութիւն՝ հոգալու սնունդի, հագուստեղէնի, գոյքի եւ այլ ծախսերը: Ճիշդ է, որ կարիքները բազում են, բայց ընկերակցութիւնը կարելի եղած սահմաններուն մէջ կը փորձէ արցախցիին ապահովել արժանապատիւ կեանք:

Վիկտոր Կարապետեան, որ Արցախի ծնունդ է, եւ իր հայրենի բնօրրանն է Արցախ աշխարհը, անդրադառնալով դարաւոր պատմութիւն ունեցող Արցախի մասին, որ գոյութիւն ունեցած է, որպէս հայկական բնակավայր տակաւին Ուրարտուի օրերէն, տակաւին 7-րդ դարէն Ն.Ք., միշտ ալ հայերով բնակուած է, կ'ըսէ, եւ դիմակայած է թշնամիներու արշաւանքներուն՝ պարսիկներուն, արաբներուն, մոնղոլներուն եւ թուրքերուն կողմէ: Այսօր այս զարգացած ժամանակակից աշխարհին մէջ, ուր կը գործեն միջազգային հսկայածաւալ մարդասիրական կազմակերպութիւններ, աչք փակուեցաւ եւ չլսուեցաւ աղաղակը ամբողջ ժողովուրդի մը, որ կ'ենթակուի անմարդկային ահաւոր վերաբերմունքի:

Կարապետեան կը յայտնէ, թէ կեանքին մէջ նման ծանրագոյն որոշում մը առնելու պարտադրանքին տակ չէ եղած եւ չէր պատկերացներ, որ օր մը նման որոշում պիտի կայացնէ դուրս գալու մեր հայրենիք Արցախէն, բայց կը շեշտէ, թէ ինք դուրս եկած է միայն ետ վերադառնալու յոյսով ու խոստումով:

Ան կը շեշտէ, թէ յոյսը չէ մարած 120,000 արցախահայութեան մօտ, վստահութիւնը միանշանակ է, եւ կը վստահեցնէ, թէ վերջերս ընկերակցութեան հրաւերով երբ կ'այցելէ սփիւռքի տարբեր հատուածներ, այդ յոյսը վառ կը տեսնէ նաեւ սփիւռքահայութեան մօտ, հաստատուելով թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մեր ժողովուրդին: Սոնա Թիթիզեան





ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, ԹԻՒ 5, Ապրիլ 2024

ՓՈԽԱԿԵՐՊԻՉ ՈՒԺԸ



Միաշաբաթի վաղ առաւօտուն իւղաբեր կանայք՝ վշտաբեկ ու սգաւոր սրտերով գերեզման գացին իրենց վարդապետին մարմինը իւղով օծելու: Սակայն, ի զարմանս իրենց, գերեզմանի զորուած քարը գտան եւ լսեցին մեծ աւետիսը հրեշտակին, որ կ'ըսէր. «Մի վախնաք, այստեղ չէ, այլ Յարութիւն առաւ»:

Աստուածորդին աշխարհ եկաւ, մարդեղացաւ, մեր մէջ ապրեցաւ եւ մեր մեղքերու քաւութեան եւ թողութեան համար

իր կեանքը տուաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ եւ սակայն երրորդ օրը յարութիւն առաւ: Ճշմարտութիւն մը, որ փոխեց ողջ մարդկութեան կեանքի ընթացքը:

Յիսուս Քրիստոսի Յարութիւնը մեր հաւատքի անկիւնաքարն է: Աստուծոյ խոստումին կատարումն է: Մեր փրկութեան երաշխիքը: Յաղթանակը մահուան վրայ:

Պահ մը մտածենք այն աշակերտներուն մասին, որոնք ակնատես ըլլալով իրենց սիրելի ուսուցիչին խաչելութեան, վշտի եւ շփոթութեան մէջ տարութեան: Բայց յետոյ, այդ փառահեղ առաւօտուն, ամէն ինչ փոխուեցաւ: Մեռելներէն յարութիւն առաւ Քրիստոս եւ մահուան վրայ յաղթանակ տարաւ: Աշակերտներուն յուսահատութիւնը վերափոխուեցաւ ուրախութեան, կասկածը վերածուեցաւ հաւատքի, եւ անոնց կեանքը ընդմիշտ կերպարանափոխուեցաւ:

Մեռելներէն յարութիւն առած Յիսուս Քրիստոսը իր զօրութեամբ, կը բնակի մեզմէ իւրաքանչիւրին մէջ՝ զօրացնելով մեզ յաղթահարելու ամէն խոչընդոտ, դիմակայելու ամէն փորձութիւն եւ ապրելու նպատակաւազ եւ իմաստալից կեանքով:

Եկէք, հաւատքով արդարացած վերանորոգենք ու փոխակերպենք մեր կեանքը Քրիստոսի յարութեան յաղթանակով, որ աստուածային ու յաւերժական սիրով է երաշխաւորուած:

Եկէք, երախտագիտութեան լեցուն սրտով եւ ճշմարտութեան մէջ խարսխուած մտքերով ու յարութեան զօրութեամբ սպառազինուած հոգիով եւ մաքրագարուած մարմիններով համարձակօրէն յայտարարենք. «Ան այնտեղ չէ», գերեզմանին մէջ չէ, որոհետեւ յարութիւն առաւ ճշմարտապէս:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՊՁՏԻԿ ԲԱՆԵՐ ՈՐՈՆՔ ՀԱՃԵԼԻ ԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ

1. ԺՊՏԷ քու ամէնօրեայ փոքրիկ նեղութիւններուդ ժամանակ:
2. ԼՈՒԷ երբ անդրադառնաս թէ մէկը սխալած է:
3. ԳՈՎԷ ընկերդ որ բարիք կամ լաւ գործ մը ըրած է:
4. ՄԱՍՆԱԿՅԷ տղոց խաղերուն, որովհետեւ Աստուած կը սիրէ զիրենք:
5. ՄՐՏԱԳԻՆ սեղմէ, վշտացած եղբոր ձեռքը:
6. ԽՕՍԷ քաղցրութեամբ, անհամբեր ու անհանդարտ ընկերներու հետ:
7. ՍԻՐՈՎ ու գործով նայէ վշտակիր ընկերոջդ:
8. ՔԱՂՅՐՈՒԹԵԱՄԲ բարեւէ խեղճերն ու խոնարհները:
9. ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ ընդունէ քու խեղճութիւնդ:
10. ԱՆԿԵՂՇՕՐԷՆ ցաւէ գործած յանցանքիդ վրայ:

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԶԻՆ ԿԱՆՈՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԱԾՈՅ, ԵԶԵԿԻԱ ԹԱԳԱԽՈՐԻ ՕՐՈՎ

Աստուածաշունչի գիրքերուն երկրորդ ժողովածուն կազմուած է, ըստ ամենայն հաւանականութեան, Յուդայի Եզեկիա թագաւորին (716-687) օրով:

Թագաւորաց պատմութեան մէջ Եզեկիա եզակի տեղ մը կը գրաւէ իր բարեպաշտութեամբ եւ միաժամանակ իր քաղաքական յաջողութիւններով: Ք.Ա. 629-էն սկսեալ աթոռակից էր Աքազ թագաւորին, որ շատ թոյլատու էր կրապաշտութեան հանդէպ: Հագիւ գահուն վրայ առանձին մնացած (716 թ.), Եզեկիա բացաւ ու նորոգեց Տիրոջ փակուած տաճարը, եւ վերակազմակերպեց քահանայութիւնն ու տաճարին ծառայութիւնը, եւ ժողովուրդը խմբեց Տիրոջ պաշտամունքին շուրջ: Համազգային պաշտամունքի առաջին առիթը եղաւ յաջորդ տարուան (715 թ.) Չաթիկին տօնը, որուն յիշատակը յատուկ արձանագրութեամբ տեղ գտած է Մնացորդներու Բ. Գիրքին մէջ (գլխ 30): Ասոր կողքին, ամբողջ երկրին մէջ բնաջնջեց հեթանոսական պաշտամունքը, կուռքերն ու բազիլները, ինչպէս նաեւ Մովսէսի շինած պղինձ օձը, որ պաշտամունքի առարկայ դարձեր էր (Դ. Թգ 18.4): Միա կողմէ, Եզեկիա ապստամբեցաւ Ասորեստանի թագաւորէն, եւ պատերազմեցաւ նաեւ փղշտացիներուն դէմ, երկու ճակատներուն վրայ ալ յաջողութիւններ ունենալով, այնպէս որ «բոլոր ազգերուն առջեւ բարձրացաւ» (Բ. Մն 32.23):

Տակաւին, Եզեկիա բանաստեղծ եւ գրող ալ էր: Եսայի մարգարէի գիրքին մէջ (38.9-20) պահուած կը գտնենք Սաղմոսը, որ Եզեկիա գրեց՝ փառաբանելու համար Տէրը, որ հրաշքով մը զինք մահուանէ ետ բերաւ: Եւ թերեւս ատիկա իր գրիչէն դուրս եկած միակ Սաղմոսը չէ, մանաւանդ եթէ նկատի ունենաք այս երգին վերջին համարը, որ կ'ըսէ. «Տէրը իմ փրկութիւնս եղաւ. Անոր համար մեր կեանքին բոլոր օրերուն մէջ՝ իմ երգերս [=օրհնութիւններս] Տիրոջ տան մէջ պիտի երգենք լարաւոր նուագարաններով» (Ես 38.20):

Գալով Աստուածաշունչի գիրքերուն, Եզեկիա յաւէտ յիշատակելի գործ մը ըրաւ. «Ամբողջ այն գործը, որուն ձեռք գարկաւ, թէ Աստուծոյ տունին ծառայութեան կապուած, եւ թէ [Աստուծոյ] օրէնքին ու պատուիրաններուն կապուած, ամբողջ սրտով ըրաւ, զԱստուած փնտռելով, եւ յաջողեցաւ» (Բ. Մն 31.21): Թէ Եզեկիա ինչ ըրաւ՝ Աստուծոյ Օրէնքին ու պատուիրաններուն կապուած, յիշատակագիրը չի ճշդեր: Բայց ճշդումը կու գայ ուրիշ կողմէ, նոյնիքն գործէն: Առակներու գիրքին 25.1-ին մէջ կը կարդանք. «Հետեւեալներն ալ Սողոմոնի առակներն են, որ Յուդայի Եզեկիա թագաւորին մարդիկը ընդօրինակեցին»: Ասիկա ցոյց կու տայ, թէ Եզեկիա ունէր խումբ մը մարդիկ, որոնք յատուկ աշխատանք տարին՝ անցեալէն եկող Ս. Գրական գիրքերն ու պատահիկները ժողովելու եւ մէկտեղելու, եւ նոյնիսկ խմբագրական որոշ աշխատանք տանելու՝ յիշեալ պատահիկները իրարու միացնելով ժողովածոյ գիրքեր կազմելու, Առակներուն եւ Սաղմոսներուն պէս: Եւ վստահաբար ասոնք միակ գիրքերը չեն, որոնց վրայ Եզեկիայի մարդիկը աշխատանք տարած են:

ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՌՐԵԱՆ (ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 3)

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

«Արդ, քանի Սուրբ Հոգիով այս նոր կեանքը կ'ապրինք, նաեւ Սուրբ Հոգիով առաջնորդուինք: Չըլլանք սնապարծ, չգրգռենք իրար, չնախանձինք իրարու» (Գաղատացիս 5.25-26):

“The Spirit has given us life; he must also control our lives. We must not be proud or irritate one another or be jealous of one another.” (Galatians 5.25-26)





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ՍՐԲՈՒԹԻՒՆՆ ՌԻ ԱՆԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ (ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ) (ԲԱԺԻՆ Բ.)

«Այս քարոզը մանրամասնորեն կը սորվեցնէ, թէ սրբութեամբ, անարարութեամբ եւ մաքրութեամբ հոգին ինչպէս պէտք է ձգտի դէպի իր Տէրը, այսինքն՝ դէպի աշխարհի փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Քարոզը նաեւ յարութեան արեւն մարմիններու պարզած վիճակին, չարին, ազատ կամքին եւ մարդկային բնութեան ու պատիւին մասին կարգ մը շինիչ խօսքեր կը բովանդակէ:»

Երկիւղած բարեպաշտութեամբ՝ աշխատինք մեր փրկութեան համար

4.- Այսպէս, Սուրբ Հոգին կը զգուշացնէ զԱստուած գիտցող անձը, որպէսզի չըլլայ թէ իր նախկին զագրելի մեղքերէն մարուելէ, Հոգին զարդերով պնտուելէ եւ երկնաւոր ու աստուածային ուտելիքին հաղորդուելէ ետք, երկնաւոր փեսային՝ Քրիստոսի սէրը անտեսելով՝ կրկին վերադառնայ իր նախկին մոլոր ընթացքին, եւ վտարուի ու գրուի իր ունեցած երանելի ու յաւիտենական կեանքին հաղորդակցութենէն: Որովհետեւ Սատանան կարող է առիթը օգտագործել նոյնիսկ անոնց դէմ, որոնք շնորհքին եւ զօրութեան միջոցով ճանչցան զԱստուած. Քանի որ մեղքը կը շարունակէ իր գլուխը վեր բարձրացնելով զանոնք փորձութեան մատնել եւ տապալել: Այս պատճառով ալ անհրաժեշտ է, որ աշխատինք, ճիգ թափենք, զգաստութեամբ եւ իմաստութեամբ հսկենք մեր անձերուն վրայ եւ երկիւղած բարեպաշտութեամբ աշխատինք մեր փրկութեան համար (տե՛ս Փլայ 2.12): Ինչ աստիճանի ալ հասած ըլլաք, դժբա՛ր որ Սուրբ Հոգիին հաղորդակից դարձաք, զգուշացէ՛ք, որպէսզի չըլլայ որ ձեր կեանքը որեւէ ատեն անտարբերութեամբ եւ անհոգութեամբ ապրիք. Բնաւ մի՛ արհամարհէք Սուրբ Հոգիին շնորհքը, որպէսզի չհետաքուցուիք այն կեանքէն, որուն հաղորդակից դարձաք:

5.- Ուրիշ օրինակ մըն ալ տամ: Եթէ սպասաւոր մը թագաւորին պալատը գայ՝ անոր սեղանին սպասարկելու համար, հարկ է, որ թագաւորական պալատին յատուկ սպասները օգտագործէ թագաւորին սպասարկած ատեն եւ ո՛չ թէ իրեն հետ բերածները: Այդ սպասաւորը մեծապէս կարիքը ունի իմաստութեան, առողջ տեսողութեան եւ զանազանութեան, որպէսզի որեւէ սխալ չզործէ ծառայութիւն մատուցած ընթացքին. Այլ սկիզբէն մինչեւ վերջ ամէն ինչ կանոնաւոր կերպով եւ պատշաճութեան համաձայն կարգաւորուած ըլլայ: Այլապէս շատ արագ կերպով կրնայ իր վարձքը կորսնցնել եւ դուրս դրուիլ պալատէն: Նոյն ձեւով ալ, այն անձը, որ որ շնորհքով եւ հոգիով կը ծառայէ Աստուծոյ, կարիքը ունի խոր տեսողութեան եւ ճանաչողութեան, որպէսզի որեւէ սխալ չզործէ Աստուծոյ ծառայութեան իր ընթացքին մէջ: Այսինքն՝ հոգեւոր ծառայութեան ընթացքին, չըլլայ որ իր կամքը շնորհքին աններդաշնակ գործէ: Որովհետեւ կրնայ ըլլալ, որ հոգեւոր ծառայութեան մէջ (ոչ ծածկաբար եւ ներքին մարդուն միջոցով կը կատարուի) անձը իր սեփական միջոցներով (սպասներով) Աստուծոյ ծառայէ, այլ խօսքով՝ իր սեփական հոգիով: Բայց Աստուծոյ կրնանք սպասարկել եւ զայն հաճեցնել միայն իր սպասներուն միջոցով, այսինքն՝ շնորհքով, միշտ իր կամքը կատարելով:

Իմաստութեան եւ զանազանութեան կարիքը

6.- Երբ մարդ շնորհքը ստանայ, կարիքը կը զգայ գիտութեան, իմաստութեան եւ զանազանութեան շնորհքին (այս պարզեւնեքը Աստուծոյ կողմէ կը տրուին անոր, որ Իրմէ կը խնդրէ), որպէսզի անձը ճշմարիտ հոգիով պաշտէ զԱստուած եւ մեղքը անակնկալ ու յանկարծակի չյարձակի իր վրայ, չզգետնէ զինք եւ ոչ ալ տգիտութեամբ, անտարբերութեամբ եւ անհոգութեամբ իրապարտուելով ու գրաւուելով՝ Աստուծոյ կամքին հակառակ ընթացք որդեգրէ: Որովհետեւ նման արարքները հոգիին համար պատիժ, սուգ ու մահ են: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Որպէսզի չըլլայ թէ ես ինքս մրցանակէն զրկուիմ, ես՝ որ ուրիշներուն կը քարոզեմ» (Ա. Կր 9.27): Տեսէ՛ք, թէ Աստուծոյ առաքեալը ըլլալով հանդերձ, ան որքան զգոյշ է: Ուստի, այս պատճառով աղաչենք Աստուծոյ, մենք, որ այդ շնորհքին արժանացանք անհնազանդութեան եւ արհամարհանքի մտածումներուն հետ, որպէսզի այդ ձեւով արժանի ըլլանք ժառանգելու յաւիտենական կեանքը:

Մարմինն եւ հոգիին անդամները

7.- Ոմանք մարմնաւոր կարգ մը խելոյթիւններ ունին: Կրնայ ըլլալ որ մէկու մը մարմինն կարգ մը անդամները առողջ ըլլան, իսկ մնացեալ անդամները անկարող ըլլան բնական գործելու: Նոյնն է պարագան հոգեկան աշխարհին մէջ: Մարդու մը հոգիին որոշ անդամները առողջ ըլլալով հանդերձ, ան կատարեալ չ'ըլլար: Եւ դուք շատ լաւ գիտէք արդէն, թէ հոգին քանի աստիճաններ ունի եւ թէ յաջորդական քանի հանգրուաններով ան մեղքի ազդեցութենէն կը մաքրուի ու կը բիրտեղանայ, եւ ո՛չ թէ մէկ անգամէն: Աստուծոյ նախախնամութիւնը, ստեղծագործութեան կարգաւորումը, արեւուն ծագիլը եւ ամէն ինչ որ ստեղծեց, բոլորն ալ այն խաղաղ ու համերաշխ թագաւորութեան համար են, զոր ընտրեալները պիտի ժառանգեն:

Մեծն Սուրբ Մակար
(Շարունակելի 2)

THE BOOK OF GENESIS


WRITTEN: PROBABLY 600-400BC
(USING STORIES FROM A MUCH EARLIER TIME)

WHAT YOU NEED TO KNOW:

The book of Genesis (meaning 'origin' in Greek) takes us from the very beginning of the world, through to the arrival of the Israelites in Egypt with Joseph. In it we find themes of creation, sin and mistakes, promises and covenants (agreements with God), and we see how God chose to use one man to kick-start his plan for humanity. The story starts with a perfect world, before things quickly go wrong. Right away we see God putting in place a plan to save humanity, which will eventually be fulfilled in Jesus. Genesis begins with a poetic description of creation and introduces a God who (unlike the gods that non-Israelites believed in) is personal and loving and wants to work with humanity to restore the world to what it was created to be.

WHY READ T?

This book is action-packed. Here we have the stories of creation, Adam and Eve, the tower of Babel, Noah and the ark, Abraham, Jacob wrestling with God, Joseph and his fancy coat, and two nations being saved from famine. This is the book to read to find out how the story starts, and to learn about a God who creates, gives purpose, and sets the greatest promise into motion.



THE GOSPEL OF MATTHEW


WRITTEN: AROUND AD80

WHAT YOU NEED TO KNOW:

